— Լաւ՛ ժամանակ է ընտրել Սօնան, — մտածում էի ես, — հիմա «Կաթնաղբիւրի» մօտ ոչ ոք չի լինի, բոլորը այստեղ են:

«Կաթնաղբիւրը» գտնւում էր նեղ ձորի մէջ, մի ահագին քարաժայռի ներքոյ, որ գոգաւորուելով, կազմել էր մի լայն քարանձաւ, որտեղից բխում էր ջուրը, եւ նոյն քարանձաւի մէջ հաւաքուելով, առաջ էր բերում մի փոքրիկ աւազան: Այս նոիրական աւազանի մէջ լողանում էին ուխտաւորներն, աւելի բժշկութեան եւ հոգեւոր շնորհներ ստանալու յոյսով: Քարանձաւի մուտքը այնքան լայն բացուածք ունէր, մինչ կիսով չափ երեւում էր նրա ներսոյքը:

Ես մտածում էի, թէ Սօնան դեռ եկած չի լինի, որովհետեւ նշանակել էր տեսնոել ինձ հետ արեւը մտնելուց յետոյ, իսկ ես, անհամբերս, եկել էի մի ամբողջ ժամ առաջ: Բայց երբ ես հեռոից նայեցայ քարանձաւի մէջ, ինձ երեւացին հանուած հագուստներ, որ դրած էին նրա մուտքի մօտ: Հետաքրքրութիւնս ստիպեց ստուգել՝ արդեօք ա՞յր մարդ էր լողացողը, թէ կին: Մտածում էի՝ միգուցէ՛ նոյն ինքն Սօնան լինէր, որ ինձ դիտմամբ տեսութիւն նշանակեց արեւի մտնելուց յետոյ, որպէսզի ինքը վերջացրած լինի իր լողանալը:

Ես սկսեցի հեռոից նայել դէպի քարանձաւի ներսը. մանուկ մարդիկ այսպիսի անպատկառ հետաքրքրութիւններ շատ ունեն: Յանկարծ ջրի մակերեւոյթից դուրս բարձրացաւ մի գեղեցիկ մարմին: Հրաշալի՛ մի մարմին էր նա: Գլխի արձակուած գիսակները սքօղել էին դեռ նոր զարգացած կուրծքը: Նա երեխայական անմեղ զուարճութեամբ թրթռում էր, խաղ էր անում աւազանի ալիքների հետ: Արեւի վերջին ճառագայթներն ընկած էին նրա դէմքի վրայ: Որքա՜ն հրապուրիչ էր ջրի մանրիկ կաթիլներով ցօղուած այն կուսական դէմքը: Բայց նա երեսը շուռ տուեց, կարծես, չէր ցանկանում, որ արեգակն իր լուսեղէն շրթունքներով շօշափէր նրա անմեղ կուրծքը: Նոյն ժամուն նա երեւցրուց մի լիքն եւ հրաշալի թիկունք:

Դա մի ռոպէական երեւոյթ էր: Մարմինը կրկին անհետացաւ ջրի մակերեւոյթի տակ:

Այսպէս երեւում են «հրեղէն կուսանքը» Վանայ ծովակի միջից. այսպէս հրապուրում են նրանք պատանիներին, որոնք լի սիրահարական ցնորքներով իրանց գցում են ալիքների մէջ, եւ ջրային աղջիկները յափշտակում, տանում են իրանց որսին դէպի ծովակի անդունդը, եւ այնտեղ՝ իրանց բիւրեղային պալատներում զուարճացնում են նրան...

Ջրային յաւէրժահարսը կրկին յայտնուեցաւ: Այս անգամ նա հանգիստ էր. այս անգամ նա չէր թռչկոտում այս կողմ եւ այն կողմ: Նա կիսով չափ նստած ջրի մէջ, սանդրում էր իր երկայն գիսակները: Նա ինքն էր, — Սօնան էր: